**Սուրեն Վարդումյանի պատմածից՝ իր հայրիկի՝ ազգագրագետ Դերենիկ Վարդումյանի, և ուսանողական տարիներին նրա հետ հանրակացարանի նույն սենյակում մնացած Պարույր Սևակի մասին «գողության» և դատաստանից ազատվելու, համալսարանից չհեռացվելու մասին պատմությունը:**

«Վերջը, հայրս պատմում էր. «Մի սոված օր, երեկոյան կողմ համալսարանի միջանցքներով թափառում էինք, մեկ էլ աչքներս ընկավ լսարաններում մեկումեջ վառվող լամպերին: Պարույրը թե «Դերո, արի էս լամպերից մեկը հանենք, տանենք սև շուկայում ծախենք»: Մի էլեկտրական լամպով կարայինք մի հատ բուխանկա առնեինք էլի, գոնե մի օր հաց կուտեինք: Հայրս թե.

«Այ Պարույր, ինչ ես ասում, մեզնից ինչ լամպ գողացող, համ էլ դրա եղածն ինչ ա որ»: Նա թե «Չէ, ինչի, լամպ ա, խանութում ծախում են, ահագին փող արժի, մենք էլ հացի փող էլ չունենք»: Դու մի ասա, էս խոսակցությունը կող քից ծածուկ լսող կա, ու մեկ էլ թե «Էդ ի՞նչ եք ասում, ինչ անե՞ք: Ուրեմը դուք ուզում էիք լամպ գողանաք, հա՞, մենք էլ ասում ենք ով ա էս լամպերը գողանում»: Հըլը ոչ մի բան չեն էլ գողացել, միգուցե կատակով զրուցում են, էլի... Էսպիսով մինչ այդ կատարված ուրիշների հանցանքը շուռ են տվել էս խեղճերի վրա: «Ուրեմն դուք հանցավոր խումբ եք, պետական սեփականությունը գողանում եք» և այլն՝ ընդհուպ մինչև քաղաքական աստառ տալը: Պատկերացնու՞մ եք: Է, հա էդտեղ ո՞նց արդարանաս: Մի խոսքով՝ աղմուկ են բարձրացնում, և ի վերջո որոշում հեռացնել համալսարանից: Իսկ համալսարանից հեռացնելը էս երեխեքի համար իսկական աղետ էր: Հայրս պատմում էր. «Արդեն պիտի հրամանը տային որ հեռացնեն, մեկ էլ էդ Հատուկ բաժնի պետը կանչում է հորս: Պարզվում է, որ էդ Հատուկ բաժնի պետ չե- կիստը մեր գյուղացի է՝ Վահագնեցի: Ասում է «ես գիտեմ քո հորն էլ, գիտեմ թե ոնց են նրան տարել, ով ա գրել, որ տարել են, ամեն ինչ մենք գիտենք, ամեն ինչ... Ու ես գիտեմ, որ քո հայրը շատ էլ ազնիվ, աշխատող, պարկեշտ մարդ ա էղել, ու դու էլ նրա պես մարդ կդառնաս, ու էս հասարակությանը դու ավելի պետք ես, քան թե երևի միլիոններով ուրիշները, ու ես չեմ ուզում, որ քեզ հեռացնեն համալսարանից: Ես էնպես կանեմ, որ քեզ չհեռացնեն, բայց դու ինչ ասեմ, պտի անես, որ երբ հարցաքննեն՝ ինչ պիտի ասես»: Շատ ռեալ օգնում է, և ոչ միայն հորս է օգնում՝ հորս խաթեր Պարույրին էլ է օգնում: Որտև կամ երկուսին էլ պիտի հեռացնեին, կամ ոչ մեկին, հասկանու՞մ եք: Հայրս ասում էր՝ մենք էդպես հրաշքով պրծանք: Եվ ավելացնում. «Ես էլ ասեցի. բա Դուք ինչի՞ եք սա անում, Ձեզ ինչ-որ բանով վտանգում», չեկիստն էլ թե «Թող քեզ չանհանգստացնի, ես էնքա՜ն մաքուր դոսյե ունեմ»: Իր չափանիշներով էլի, որ այսինքն… էնքան մարդու ես կարամ վատություն էլ անեմ, լավություն էլ, որ կարամ ինձ թույլ տամ՝ քեզ լավություն անեմ: Թվաբանությունը հասկացաք, չէ՞: Այսինքն՝ ես էդ վստահության ռեսուրսը ունեմ, էլի... Եվ փաստորեն էդպես էլ չեն հեռացնում: Հայրս չէր սիրում էդ մասին խոսել, չէր պատմում էդ հարցաքննությունը ոնց է էղել, ինչ է էղել: